ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/44450-2024

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-945-15.10.2024-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 416-րդ հոդվածում լրացվող նոր 6-րդ մասում «ապրանքային դիրք» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ ծածկագիր» բառերով:

Առաջարկությունը պայմանավորված է ս.թ. սեպտեմբերի 9-ին ԱԺ կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունված «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» /Կ-908-03.09.2024-ՏՀ-011/2ամբ/ ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ, որի 5-րդ հոդվածով ամրագրվել է Օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասում «ապրանքային դիրքի» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ ծածկագրի» բառերով:

2. Նախագծի 3-րդ հոդվածով օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետն առաջարկում ենք վերանայել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները:

Ըստ այդմ Նախագծի 3-րդ հոդվածում «հունվարի 1-ից» բառերը փոխարինել «մարտի 3-ից» բառերով:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ